

“ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԷ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1888

ԹԻԻ 12


ՄՈՎԱՅԻՆ ԹՈՉՈՒՆՆԵՐ

Երովային թռչունները բոլոր ուրիշ կենդանիներից վրայ սա առաւելութիւնը ունին որ տեղէ տեղ փոխուելու յարմար են այլ և այլ կերպերով: Կրնան թռչիլ օդին մէջ, քայել ցամաքին վրայ, կամ սունկի նման լողալ ջրին մէջ: Ամէն տեղ իրենց բնակարան է:

Ճայր (հուլի հուլ) ծովային թռչուն է և շատ բնասանի բուրր անոնց որ կը բնակին ծովեզերքը և կամ երկրին ներսերը գանուած լիճերուն մօտ: Շատ յարմարութեամբ կոչուած է ճայր վոսփորի աւելածուն (սփփփ), և տարօրինակ կը թռի որ այսպէս մաքուր և փափուկ երևոյթ ունեցող թռչուն մը ըստ մեծի մասին կերակրուի կուտանդնուպորիս մեծ քաղաքին ապականութիւններովը:

Բայց ճային թռչելու կարողութիւնը տկար է բարդատես լով ուրիշ տեսակ ճայի մը հետ զոր տեսանք լայնածաւալ Ատլանտեանին վրայ երկու եզերքներէն հազար մղոններ հեռու: Այս թռչունները կը թռի թէ յոգնիլ չեն գիտեր, և օրերով նաւերուն ետեւէն կ'իջնան որպէս զի ժողովն ծովը նետուած փրշրանքները, և հազիւ երբեմն կը տեսնուի անոնց թառիլ: Ճային ուրիշմէկ տեսակը կայ որ կը կոչուի փոթորկի ճայ, վասն զի նաւաւարք կը կարծեն թէ անոր երևնալը փոթորկի ելլելու նշան է: Եւ որչափ սաստիկ ըլլայ հովը, որչափ ալեկոծեալ ըլլայ ծովը, թուով այնչափ շատ կ'ըլլան այն թռչունք, վասն զի ծովուն ալիքները դուրս կը նետեն ծովային կենդանիները զորոնք որսալ կը սիրեն ճայերը:

Աստուած տուած է անոնց զարմանալի բնազդում մը, որով կարող կ'ըլլան գտնել իրենց ճամբան դէպի ցա-



ՄՈՎԱՅԻՆ ԹՈՉՈՒՆՆԵՐ

մաք այնպէս անսխալ կերպով ինչպէս նաւաւարք կրնայ գտնել իւր կողմուցոյցին միջոցաւ և արեղակը դիտելով: Եւ մեր պատկերին մէջ տեսնուած խորտակեալ նաւու կտորը կը հասկցունէ մեզի թէ քաջ նաւաւարութիւնը միշտ կարող չէ ազատել

նաւը խորտակուելէ, բայց թռչունը անվնաս կը մնայ:

ՀՈԳԻՒ ԱԺԱՆ ՄԻՒ ԾԱԽԵՐ

Ասկէ քանի մը տարի առաջ օր մը կը նստէի Շեքսպիրի մեծ վաճառատան մը մէջ և կը սպասէի բարեկամի մը:

Դուրսը քիչ մը փոթորիկ կ'արարէր, և ապա ընդ ծախողները շատ գոթած չափերէն իմ մօտ կը կանգնէր սպայ մը կրօնակը տուած տարածմանը գէղի մը, և իւր արմուկը անհոգ կերպով մը դրած նոյն գէղին վրայ: Դիտեցի որ գէղը գեղեցիկ էր և ունէր սև մազեր և վառ դուռն աչքեր: Եւ այստեղ կը ջուլմէին թէ նա կատարելապէս առողջ էր: Դիմացս ստակի տախտակին քով կը ջող տիկին մը մինչ դրամաւանս մը կը վճարէր, ձգեց իւր ձեռքէն քանի մը հատ մանր ստակ: ստակները գլորելով ինկան սեղանին վրայէն գետին: Չանոնք ժողովեց ազնուականի կերպարանք ունեցող անձ մը որ մօտ կը գտնուէր, բայց կարող չեղաւ գտնել ստակներէն մէկը, հինգ դահեկաննոց մը, որ առանց ձայն հանելու գլորելով տակտակամածին վրայ գացած էր վերը յիշուած տղին մօտ: Տղան առանց փոխելու իւր գէղը, մէկ ոտքը դրաւ ստակին վրայ, և անանկ կը ձեւացունէր թէ բանէ մը տեղեկութիւն չունէր, և կեցած կը նայէր գէղի մինչ ուրիշներ կը փնտռէին ըստակը:

Տեսայ որ նա այսպէս կ'արատաւորէր իւր հոգին, և մտքիս մէջ տխուր խորհուրդներ ունեցայ, թէ ի՞նչ պիտի ըլլար առ փորձանք: Շուտով քովը գացի և փախացի անոր ականջին, «Տղաս, կ'ուզե՞ս ծախել հոգիդ հինգ դահեկան շնչին ստակի համար, Չե՞ս գիտեր որ ստակը քու ոտքիդ տակն է: Տեղը տուր գայն և բնաւ, բնաւ մի բներնորէն այսպիսի բան մը»:

Տղին գէղը գեղեցեացաւ. ծոռեցաւ գետին և վերցուց ստակը: «Տիկին», ըսաւ, «ուրիշի մի յայտներ այս բանը, կ'աղաչեմ, կը պաղատիմ, և ես այլևս բնաւ պիտի չընեմ այսպիսի բան: Խորհէ մօրս վրայ»:

Կարծեմ տղան կը համարէր թէ ես կը ճանչնայի զինք: Բայց այն ատեն չէի ճանչնար զնա. յի՞տոյ իմացայ թէ ո՞վ էր. և որովհետեւ նա իւր վարպետներուն քով կեցաւ բաւական տարիներ, և բարձր դիրքի մը մէջ դրուեցաւ հոն, ինձ կը թուի թէ բնաւ դարձեալ չգործեց այն յանցանքը: Աստուած միջոց ըրած էր զիս արգելելու զնա մեղքէ:

Տղաք, առաջին գողութիւնը գէպի բանտ երթալու ամենէն խոշոր քայլն է. ոգելից ըմպելեաց առաջին բաժակը ձեզ արեւեցողներու գերեզմանին աւելի կը մօտեցունէ զան որչափ կը մօտեցունեն ձեզ բոլոր անոնք որ կը խմէք այնուհետեւ: Շատ անգամ առաջին երգումը կը հաստատէ ձեզ չար խօսքեր խօսելու ունակութեան մէջ: Հոգին որ անգամ մը կ'արատաւորի, դժուար է մաքրել: Կան առաքինութիւններ զորոնք հնար է կորսնցունել,

բայց երբ անգամ մը կարտուին, այդ ևս կ'երթան և ես չեմ գտնուար:

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՎԱՅՐԵՆԻՆԵՐԸ

Մեր առջեւ գրուած պատկերը կը ցուցնէ մեզի մարդկային երկու ցեղերու մէջուց հասնողական առնչութիւն մը որ այժմ էր բոլոր մշակութեանը: Ամերիկայի առաջին անգամ գաղթող Անգլիացիք շատ նեղութիւն և առաւարտք կրեցին, և շատ անգամ աւոյթի մնացին: Պատկերը կը ցուցնէ որ Ամերիկայի վայրենիք բնծայ կը բերեն գաղթականաց եղբիկ մը զոր կ'ընդունին ասոնք շնորհակալութեամբ. և նոյն ժամանակ փոքրիկ աղայ մը կը վազէ այս բարի լուրը հազարգել իւր մօրը:

Տասունները մեծ մասամբ սպաննուած են, և իրենք ստիպուած են թողուլ իրենց նախկին վայրերի կեանքը: Ամերիկացուց մէջ դասուող անոնց ճշմարիտ բարեկամք որ պատրաստ են խոստովանիլ թէ մեծ անիրաւութիւններ ըրած են իրենց հայրերը կարմիր մարգոց (Ամերիկայի վայրենեաց), կը յորհորհրան գանուք սորվիլ քաղաքակաւագեաց կեանքի արհեստները, և ճերմակներուն նման ունհատուցէս տէր ըլլալ իրենց երկրին: Անոնց մանչերէն և աղջիկներէն շատերը հիմա կը դաստիարակուին իրենց համար չար սուկ շինուած դպրոցներու մէջ. և մենք կը յուսանք թէ վայրենիք չուտով պիտի ցուցնեն զիրենք արժանի ընդունելու քաղաքացիութեան իրաւունքները:



ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՎԱՅՐԵՆԻՆԵՐԸ

Բարեկամական այս առնչութիւնը օգտակար էր երկու կողմին համար ալ: Վայրենիք Անգլիացուց կրնային բերել որսի կենդանիներ և երկրին ուրիշ բերքերէն, և Անգլիացիք անոնց կրնային ընծայել իրենց հայրենիքէն բերուած բաներ, նաև մասնակից ընել զանոնք քաղաքակրթութեան օրհնութեանց: Բայց դժբախտաբար այնուհետեւ չուտով արևմտահեղ պատերազմներ էին երկու կողմն ալ, և վայրենի ցեղերը կամաց կամաց ջնջուեցան, կամ ստիպուեցան նոր բնակութիւն հիմնել արևմտեան կողմը հեռաւոր տեղեր, ուր տակաւին մտած չէին ճերմակ մարդիկ (Եւրոպացիք): Հիմա անոնք կը բնակին Ամերիկեան կառավարութեան իրենց համար սահմանուած երկրի մէջ, բայց անոնց որսի աւուրները և պիտի ջնջուին բոլոր այն խորութիւնք որ կը գտնուին իրենց և իրենց ճերմակ դրացեաց մէջուրը:

ուրները և պիտի ջնջուին բոլոր այն խորութիւնք որ կը գտնուին իրենց և իրենց ճերմակ դրացեաց մէջուրը:

ՓՈՒՔԻ ԳԵՂՋՈՒԿ ՏՂԱՆ

1790ին երբ Գաղիացի և Բրուսիացի բանակները կեցած էին դէմ առ դէմ, փոքրիկ աղայ մը որուն հայրը կը բռնուէր Բրուսիական գունդերուն մէջ, լսեց թէ բանակին մէջ զօրքերուն պէտքերը լաւ չէին մատակարարուել, և թէ ստակով անգամ հնար չէր տեսիլք գինել: Այս բանին վրայ յաճախ խօսուելուն համար, խոր պալատորուցաւ այն փոքրիկ աղին մարցին մէջ: Տղան դիմաւորով ըր իւր մայրն ունէր առատ գետնախինձոր (հարկէ), միտքը դրաւ իւր հօրը քիչ մը տանել անկէ: Ընամայ ելլելու այնպիսի փափաք ու-

ներ որ չկրցաւ սպասել իւր մօր տուն դասնարուն մերձակայ գիւղէն, այլ գեանախնձորով լեցուց տուրակ մը, և ճամբայ ելաւ երթալ դէպի Հոռնոս գետ, վասն զի դիտել թէ իւր հօր գունդը բանակած էր Մայնցի մօտ, և սորված էր իւր վարժապետէն թէ հոն երթալու ամենէն կարճ ճամբան ո՛րն էր։ Ուր որ կը հասնէր իւր բեռը շարժած, այն տեղւոյն մարդիկը սիրով կու տային անոր ուտելիք և պատապարտելու աեղ։ և Մայնցի կողմ գացող դատարկ սայլ մը պատահելով, բեռը կռնակէն առնուեցաւ և դրուեցաւ սայլին վրայ, և այսպէս ապահով կերպով տարուեցաւ նա Բրուսիական բանակը։ Տղան երբ իմացուց իւր գալուն պատճառը և իւր հօր անունը, գունդին հրամանատարը բաւ պատանուոյն որ իւր ստորակն առած երթայ բանակը, և ինք մարդըրկեց կանչել անոր հայրը։ Երկուքին ալ ուրախութիւնը յիշաւի՛ մեծ էր, և երջանիկ հայրը բանակին մէջ պահեց տղան մինչև որ աղէկցաւ իւր երկար ճանապարհորդութեան հետեւանքն եղող տկարութենէն։ Գունդին հրամանատարը և միւս սպայք որ շատ մեծ համարում դրած էին այն փոքրիկ անվեհեր ճանապարհորդին վրայ, վայելչապէս վարձատրեցին զնա։ Նոյնպէս ըրին նաև Գաղիացիք որոց ձեռքն ինկաւ տղան յետոյ։ Վասն զի մարդասիրութեամբ վարուեցան անոր հետ, և անոնց զօրավարը (Գիւսթին) մինչև անգամ պարգև մը տուաւ անոր և դարձեալ աղատ արձակեց զնա։

ՉԳԱԽԻԺԻ ԾԱՌ

Գոյումպոսի ընկերներէն մէկը մինչ Ամերիկա կը ճամբորդէր, տեսաւ Հայթի կղզւոյն մէջ տղաք որ ծառի մը խէժէն շինուած գնտակ կը խաղային, բայց անկէ շատ ժամանակ ետքը հասկցուեցան այս խէժին ազնիւ յատկութիւնը։ Այն էր ձգախիժ (լատինէն) կոչուածը որ կը գտնուի աշխարհիս զանազան մասանց մէջ։ Բայց ամենէն առատ կը գտնուի Հարաւային Ամերիկայի և Կեդրոնական Ամերիկայի անտառներուն մէջ։ Եթէ ծառին կեղևը ձեղքուի, կաթի նման հեղանիւթ մը կը վազէ անկէ, որ եթէ չորնայ կ'ըլլայ ձգական խէժ։ Եթէ արեւին մէջ չորնայ բաց գոյն մը կ'ունենայ։ Բայց ընկիները որ ձգախիժը կը կոչեն բուռն, կ'արտօրան չորցունելու դայն կրակով, և կրակին ծուխին համար է որ վաճառականաց ծախած ձգախիժները սև գոյն ունին։


Չգախիժն առաջին անգամ սկսաւ գործածուիլ անկէ իբր 100 տարի առաջ կապարեայ գրչի դիժերն հանելու համար, և այնուհետև հետզհետէ սկսաւ գործածուիլ ուրիշ նպատակաց համար ալ։ Անոր այժմու պայտափ յարգունենալուն գլխաւոր պատճառն են Մր. Չարլս կուտեիլը Ամերիկացւոյն գիւտերը։ Յիշեալ անձը շատ տարի-

ներ շարունակ փորձեր ընելով հասկրցաւ թէ ինչպէս պատրաստելու էր զայն որպէս զի յարմար ըլլար գործածութեան։ Անոր առաջգահանութիւնը, սնդութիւնը և շուր չանցունելը յարմար կ'ընեն զայն ոտից ամաններ, անձրևէ պահպանող վերարկուներ, նաև կառքերու զոպանակներ և մեքենաներու փոկեր (շաշն) շինուելու։ Չգախիժն հետ ծծումը խառնուելով կը կարծրանայ, և այս կարծրացած ձգախիժէն կը շինուին սանա-

ՀԱՐՈՒՍ ՄԱՐԳՈՒ ՄԸ ԿՍԾՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Պոսդոնի լրագիր մը կ'ընէ պատմութիւն մը ճոն ձէյքըլ Ասթորի վրայ որ Միացեալ Նահանգաց մէջ անէն հարուստ մարդն էր։ Պատմութենէն կը հասկցուի թէ սրամիտ և արթուն մարդիկ անգամ ինչպէս անվտուրութիւններ կ'ընեն իրենց գործերուն մէջ։

Ասթորի նաւապետներէն մին վեց անգամ նաւարկած էր Չինաստան և



ՉԳԱԽԻԺԻ ԾԱՌ

ներ, կոճակներ, ժամացոյցի շղթաներ, և ուրիշ շատ բաներ։ Ասկէ քիչ տուալ խօսած ենք Տղայոց Աւետարեբրի մէկ թուոյն մէջ թէ ո՛րչափ շատ նպատակներու կը գործածուի արևուտնին, և ուրիշ թուոյ մը մէջ թէ ինչ մեծ արժէք ունի մշտնջին ծառը որմէ բնական կը հանուի. ահաւասիկ ուրիշ ծառ մըն ալ որ արժանի է անոնց կարգը դասուելու, իւր ծառայութեան համար մարդուս բարեկեցութեան։

ուրիշ հեռաւոր երկիրներ առանց ժամանակապի գործիքի, այլ միայն վերի վերոյ հաշիւներով և լուսինը դիտելով։ Յետոյ երբ եօթներորդ անգամ ճամբայ պիտի ելլէր, բաւ Մր. Ասթորի թէ աւելի ապահով պիտի ըլլար ճանապարհորդութիւնը եթէ ժամանակապի գործիք մը ունենային։ «Շատ աղէկ, առ հատ մը», բաւ վաճառականը։ Նաւապետն տուաւ գործիքը և իւր հաշուեցուցակին մէջ անցուց զայն։ Երբ Մր. Ասթորի աչքին զարկաւ գործիքին անունը և գիւրջ ամուսին մէջ իւր գրելով արեց զայն։ Ասոր վրայ

նառապետը պրուսաց, «ի՞նչ կ'ընես, մա՛րդ:» «Ես բարեբեղի որ առնուս հատ մը, բայց չըսի թէ անոր ստակը պիտի տամ:» Ըսաւ Ասթոր:

Նառապետն Ասթորի հետ իւր առնչութիւնը անմիջապէս խզեց այն տեղը, գնաց և ուրիշ վաճառականաց դիմեց գործի համար, և գիշերը վրայ հասած իրեն յանձնուեցաւ հրամանատարութիւնն այնպիսի ընտիր նաւու մը որոյ նմանը ճամբայ ելած չէր նիւ Եորքի գեղեցիկ ծովածոցէն:

Երեք օրուան մէջ պատրաստուեցաւ ճամբայ ելլելու: Նոյն ժամանակ Ասթորի նաւն ալ ճամբայ կ'ելլէր նոր նառապետի մը հրամանատարութեան ներքեւ: Երկու նաւերն ալ Հոնկ ֆոնկ կ'երթային, և ճոն Ասթորէ բաժնուող նառապետը արթնութեամբ կառավարելով նաւը և յաջող հովերուն առիթով միւս նաւէն երեք օր առաջ հասաւ Հոնկ ֆոնկ: Ըստ կարի կարճ միջոցի մէջ բեռագուց իւր նաւը, և երբ եկած հասած էր նաև Ասթորի նաւը և տակաւին կիսով չափ միայն բեռացուած էր, մեր նառապետը խարխիւր վերցուց և թէյով լաւ բեռնաւորուած իւր նաւը ճամբայ ելաւ երթալ գէպի նիւ Եորք: Հասաւ հոն քիչ ժամանակէն, հպեցուց նաւը նաւաւանտոյցին, սկսաւ պարպել բեռը որ այն տեղը ծախուեցաւ աճուրդով: Այսպէս նիւ Եորքի շուկան թէյով լեցուեցաւ, վասն զի թէյը շատ չէր ծախուեր այն օրերը, և երբ Ասթորի նաւը ևս հասաւ նիւ Եորք, գիններն ինկած էին: Երկու օր ետքը, երբ նառապետը ժուռ կու գար փողոցին մէջ, հանդիպեցաւ ճամբուն վրայ իւր նախկին տիրոջը:

«Բանի՛ տղարի եղաւ քեզի այդ ժամանակաշափ գործիքը,» հարցուց ճոն Ասթոր:

«Վեց հարիւր տողարի,» պատասխանեց միւսը:

«Շատ լաւ, աժան է եղեր այդ,» Ըսաւ Ասթոր, «ինձի 60,060 տողարի նստաւ այն:»

Թէ՛ վաճառականը և թէ՛ նառապետը մեռան տարիներ առաջ, բայց այն ժամանակաշափ գործիքը տակաւին լաւ փիճակի մէջ է և կը դործէ, և կը պահուի իբրև թանկագին նշխար մը: Մինչև անգամ հարուստ մարդու մը միշտ օգուտ չընեն կծծութիւնը:

ՕԳՏԱԿԱՐ ԱՌՆԵՏ ՄԸ

Հստակ է արժանահաւատ պատմութիւն մը որ կը ցուցնէ թէ առնէտ մը ինչ ազդեցութիւն ունեցած է Գաղիոյ բանասերէն միոյն մէջ դրուած ոճրագործի մը վրայ: Այս մարդն այնպէս բիրտ էր և դաժան որ բանտապետը ստիպուած էին իրենց բոլոր կարողութիւնը գործածել զայն զպակու համար: Բայց ժամանակէ զի ետքը տեսնուեցաւ որ օր ըստ օրէ կը բարւոքէր անոր վարմունքը: Չկրցին հասկնալ թէ ի՞նչ էր պատճառը. բայց օր մը երբ

նա կը գործէր իւր ընկերաց հետ, մեծ առնէտ մը նետուեցաւ դուրս անոր վերարկուին կուրծքէն, և վաղեց բանտին յատակին վրայ: Բանտին պահապանները առնէտին ետեւէն ինկան բռնելու զայն. բայց մարդը ողորմագին աղաչեց որ ինայէին իւր այն սիրելի անասնիկին կեանքը, և անոնք թոյլ տուին մարդուն երթալ անոր ետեւէն: Առնէտը եկաւ գէպի մարդը երբ սաձայն ըրաւ, և դարձեալ մտաւ անոր ծոցը: Այս դէպքէն ետքը մարդը աւելի հնազանդութիւն և հպատակութիւն կը ցուցնէր, և ի վերջոյ բանտապետաց վստահելի օգնականն եղաւ: Այս կերպով այն չար մարդուն սէրը գէպի մի միայն արարածը որ կը թուէր թէ հոգ ունէր անոր վրայ, եղաւ միջոց անոր տարբեր մարդ մը ըլլալուն:

ՀՐԵՏՏԱԿԸ ԲԱՆՏԻՆ ՄԵՋ

Ասկէ քանի մը տարի առաջ երկու մարդիկ մահուան դատապարտուեցան սպանութիւն գործած ըլլալով: Բանտարկուած էին Ամերիկայի բանտերէն մէկուն մէջ, և հոն կը սպասէին կախուելու: Օտարականներ էին անոնք օտար երկրի մէջ վասն զի երկուքն ալ գրաւէն եկած և հոն բնակած էին: Առանց բարեկամի, երեսի ինկած և յանցաւոր ըլլալով՝ անոնց փիճակը ցաւալի էր: Քաղաքին երևելի ընտանիքներէն մէկուն փոքրիկ աղջիկը հրեշտակի դէմքով և կերպարանքով, և քաղցր ու սիրտ գրաւող ձայնով ինչպէս են թռչուններուն գեղեցիկ երգերը կիրակի առաւօտուն երբ օդը պարզ է, արտօնութիւն խնդրեց և տրուեցաւ իրեն՝ այցելել բանտարկեալները: Աղջկան փափուկ սիրտը չարժեցաւ երբ տեսաւ անոնք հոն միայնակ և թշուառ փիճակի մէջ: Խնդրեց որ թոյլ տրուէր իրեն կարգաւոր անոնց: Գարնան և ամառուան մէջ աձէն օր կը տեսնուէր նա որ ճերմակներ հագած սողակերով կը մտնէր բանտը, և իբր թէ թռչելով կու գար ուղղակի երկինքէն: Աղջիկը նստելով պարզ աթոռի մը վրայ, երկաթ վանդակին դրսի կողմը որ իբրև դուռ կը ծառայէր, կը կարդար այն բանտարկեալներուն Յիսուսի անգին խօսքերը, և իտայելի քաղցր երգեր շարադրոցին, Յեսուսի որդւոյն, Սաղմոսները, և ուրիշ գիրքեր որ կը ցուցնէին առ Քրիստոս և գէպի երկինք երթալու ճամբան: Իւր պարզ և մանկական կերպով կը բացատրէր անոնց՝ խաղաղութեան և հաճութեան աւետարանը: Երկնաւոր պատգամը բնաւ լսած չէին անոնք աւելի սուրբ շարժումներէն և աւելի սիրող սրտէ, ո՛չ ալ աւելի համալիր կերպով: Ճշմարտութիւնը կամաց կամաց կը մտնէր բանտարկեալներուն անկյակ միտքերուն մէջ մաս մաս, ինչպէս արևուն լոյսը կը մտնէ փոքրիկ ծակէ մը ներս սենեկին մէջ: Անոնցմէ մէկը անցեալ աշնան իւր կախուելէն առաջ

փնտռեց և գտաւ փրկիչը և կախահանէն փոխադրուեցաւ դրախտը: Հրեշտակ մը մտաւ բանտը և Պետրոսի ձեռքէն բռնելով դուրս հանեց զնա: Այս փոքրիկ հրեշտակը մտաւ բանտը և մեղաց ու Սատանայի այս գերիին ձեռքէն բռնելով մտցուց Աստուծոյ Որդւոյն փառաւոր աւետարանին լուսոյն և ազդեցութեանը մէջ: Ուրիշ և թերևս նոյն հրեշտակը հրաշալի կերպով մը կէս գիշերուան առնէտ մտաւ բանտը ուր Պօղոս և Շիղա կը գտնուէին իրենց ոտքերը ամուրցուած ժանգոտ հին երկաթեայ կոճորուած մէջ, և քակեց անոնց ոսնակապները և ազատ արձակեց զանոնք: Այս փոքրիկ հրեշտակը մտաւ բանտը ուր արգելուած էին ոչ միայն երկաթ վանդակին միւս կողմը, այլ նաև մեղաց և եղեռնագործութեան աւելի մութ և խաւարչոյին բանտին մէջ, և իւր փափուկ ձեռքով քակեց գոնէ մէկուն կապանքները և ազատ արձակեց անոր հոգին յանցանաց և դատապարտութեան ժանգոտ երկաթեայ կոճորէն, և ցուցուց անոր՝ Հօրը տունը որ բարձրերն է: Մահապարտը անոր ի սիրոյ չարժեալ և երկայնամիտ ծառայութեամբը դարձաւ շուտ հեռաւոր երկրէ մը Տէր Յիսուսի ներող սիրոյն հովանոյն ներքեւ: «Բանտի մէջ էի, և ինձի եկաք,» «Չանոնք մէկ պզտիկ տղայ մը պիտի քէ:»

ՊԵՏԱՍՍԱՆ ՀԱՆՆԵԼՈՒԿԻ

Հոնակները անոց հանելուկին պատասխանէ «Յիսուս,» քաղցր անունը: Բանտի եղալ բառերն են՝ Նայնի, Եղբար, Արամ, Ամուկ, Գառիթ, Փսոս: Լուծեցին: Կ. պոլիս.— Յարութիւն Կ. Երկրաբան, Յ. Արշալույս Գ. Քեմալեան, Գ. Ս. Գարեբեդեան, Քրիստոս Զամբարձուեան, Նիկոլայիս— Մեթոդիոս Ս. Դաճեան, Պարտիկալ, — Տորբէն Ս. Ալիքսանդրեան, Յովէլ Մ. Պերկլեան, Յովակիմ Մ. Յակոբեան, Հրանտեան, Աստիտեան, Կարապետ Չ. Յոսիպեան, Մկայէլ Ս. Գարեբեդեան, Ալեքսանդր Մ. Սիմեոն, Մարգարէ Գ. Կոստանեան, Մարգարէ Մ. Գրիգորեան, Սիւրբ Մ. Մակարեան, Գէորգ Ս. Սամուէլեան, Օլիգերդ, — Գալուստ Ալեքսանդր, Կարապետ Կարապետեան, Կեանքաւոր Մ. Ս. Չամբերթեան, Էտեմուր, — Ս. Նիկիէ Յ. Նիկիտեան, Մարտի — Յարութիւն Մարտաբան:

Table with 3 columns: ՀԱՆՆԵԼՈՒԿ, ՍՈՒՐԵՆ, ԳԻՐԲԷՆ. Rows of numbers and dots.

- 1. Զամբարձուցող մին,
2. Խորախնայեցող անմաքուր կենդանի մը,
3. Դախայ որդոց մին,
4. Յուզայի Քաղաքացի մին,
5. Մոլոխի աները:

Մեն մի բառ հինգ զիրեթ կըրողանայ: Աստիճ վերի կարգաւ իրարու սակ շարելով կ'ուրանա զառականք մը, որոյ արամանկները ձեռքարկող զիրեթն մէկ կարգը ձգեցնէ ու, և զէպի վար, կը կարգաւորէ իրեան զորավարը մը անունը, և միւս արամանկները ձեռքարկող զիրեթն կարգը ձգեցնէ ու, և զէպի վար, կը կարգաւորէ վաղը մարգարէի միտք անունը:

Advertisement for 'ՊԵՏԱՍՍԱՆ' (Petassan) featuring a portrait of a man and text in Armenian: 'Ամերիկայի Մեխուրարտի Պետասանի կողմէն, Արտասանողը, Տնօրէն— Խմբագրութիւնը, ՄԱՐԿԸՄ, Ձեռնանկարի եղբարեացի Կարապետ Կարապետեան, ԿՈՍՏԱՆԴՆՈՒԿՈՒԼՈՒՅ, Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՅՈՒ ՊՕՅԱՆՅԱՆ'.